ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սիգիշմի 1

№ 4750-Ա « 09 » դեկտեմբերի 2024 թ.

ԵՐԵՎԱՆԻ ԱՐՑԱԽԻ ՓՈՂՈՑԻ Հ. 18Ա ՇԵՆՔԻ Հ.30՝ 57.49 ՔՄ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել Մարինե Մովսիսյանի, Հրաչիկ Բոզոյանի, Աննա Ավետիսյանի, Սոնա Ավետիսյան լ/ա Կարմեն Պողոսյանի դիմումը՝ Երևանի Արցախի փողոցի հ.18ա շենքի հ.30՝ 57.49քմ ընդհանուր մակերեսով բնակարանը մասնավորեցնելու մասին:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, ՀՀ քաղաքացիական օրենսգիրքի 594-րդ հոդվածով, հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2023թ. դեկտեմբերի 26-ի հ.50-Ն որոշման հավելվածի 4-րդ կետի 2-րդ և 7-րդ ենթակետերը.

1.Երևան համայնքի սեփականություն համարվող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.15022017-01-0125 վկայական) Երևանի Արցախի փողոցի հ.18ա շենքի հ.30՝ 57.49քմ ընդհանուր մակերեսով բնակարանն անհատույց օտարել /նվիրել/ նույն բնակարանի բնակիչներ Մարինե Վոլոդյայի Մովսիսյանին, Հրաչիկ Սերոբի Բոզոյանին, Աննա Զավենի Ավետիսյանին, Սոնա Սերոբի Ավետիսյանին (4 անձ, այսուհետ՝ նվիրառուներ) որպես սեփականություն:

2. Լիազորել Երևանի Էրեբունի վարչական շրջանի ղեկավարին՝ Երևանի քաղաքապետի անունից, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, նվիրառուների հետ կնքել բնակարանի նվիրատվության մասին պայմանագիր:

3. Ընդունել ի գիտություն, որ նվիրատվության մասին պայմանագրից ծագող իրավունքի պետական գրանցման և նոտարական վավերացման հետ կապված ծախսերը կատարվում են նվիրառուների կողմից:

4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի վրա:

6. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Ա. Փամբուխչյանը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ